ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2015թ. թիվ 257-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի
ԹԻՎ 165-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի, ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 31.08.2015թ. թիվ 1/32.2/12506-15 հանձնարարականի՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2010թ. օգոստոսի 5-ի թիվ 165-Ա որոշման 10-րդ հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի կանոնադրության» 5-րդ կետը լրացնել նոր՝ 20-րդ ենթակետով.

«20) Ցուցաբերում է աջակցություն համայնքների ղեկավարներին համայնքային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. սեպտեմբերի 15
ք.Վանաձոր